Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99.01
Ч-39

Koninklijk Instituut voor de Tropen
Amsterdam
E. O. Tropenmuseum
Tropenmuseum

891.99.09
Ա-39
սր
13 APR 2011
№ 9245

ԱԿՆԱՐԿ ՀԻՆ ՀԱՅ
ԲԱՆԱՀԻԻՍՈՒԹԵԱՆ
ՎՐԱ

Դ.Ս.

Ս. Տ.-Պ.

1002
7369

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ»
1904.

-5 FEB 2013
62.891

Доз. цензурою. С.-Петербургъ, 18-го Апрѣля 1904 года.

«Пушкинская Скоропечатня», Лештуковъ, 4.

Մասնագիտական բազմաթիւ և մեծարժէք ուսումնասիրութիւններն՝ այս նիւթին վերաբերեալ, մեր միջակ ընթերցող դասակարգին օտար ու անմատչելի են մնում։

Մի հարևանցի ակնարկ ձգել Հայոց հին բանահիւսութեան վրա, նրա ճաշակը տալ և ընթերցողին հետաքրքրել մեծ գրականութեանը դիմելու,—ահա այն համեստ առաջադրութիւնը, որ դրդեց մեզ կազմել ու հրապարակ հանել այս հակիրճ գրուածքը։ Լաւագոյն և կատարեալ գործ անելու ասպարէզը դարձեալ մնում է աւելի ձեռնհաս անձանց։

ТИФЛИССКАГО СОБРАНІЯ БИБЛІОТЕКА

Տարակոյս չկա որ հին Հայաստանում բանաւոր գրականութեան մի մեծ գանձ է գոյութիւն ունեցել, որի լոկ յիշատակութիւնն է մեզ հասել։

Հայը հին դարերում ժամանակակից քաղաքակիրթ ժողովուրդների հետ շփւելով և ինքն էլ որոշ աստիճանի բարձր քաղաքակրթութիւն ունենալով՝ անհնար է երևակայել որ զուրկ լինէր գրականութիւնից։ Մարդկութեան պատմութեան մէջ որոշ դեր կատարելով՝ նա կ՚ունենար անշուշտ և իր պատմութիւնը, կ՚երգէր իր քաջերին, կը նկարագրէր իրեն շրջապատող բնութիւնը։

Ամեն ազգի պատմութիւնը սկսում է բանահիւսութեամբ. ամենահին գրականութիւնը սկսում է երգերով։ Այդպէս է նաև հայոց գրականութիւնը՝ դատելով մեր ծեռքը հասած չնչին մնացորդներից։

Ցունաց բանաստեղծների հայրը, աստուածացրած Մուզէոսը, իր երգով և քնարի թովիչ զօրութեամբ գիւթում էր ոչ միայն մարդկանց, այլև անկենդան բնութիւնը պարելու էր հրապուրում և գաղաններին անդամ սանձահարում։ Խօսքերին ընկերացող երաժշտութիւնը կրկնապատկում է արտայայտելի

զգացմունքի թափն և ուժը։ Այդտեղից և քնարերգական բանաստեղծութիւն (լիրիկա) անունը,—բանաստեղծութեան առաջին տեսակը որ յատուկ է ամեն ազգի և ամեն մարդու. մարդ կարիք է զգում իր սրտի աղմկայոյզ խորքերում անցած դարձածին, զգացմունքին, երևակայութեան ուժով կերպարանք տալու, խօսքի միջոցով ուրիշներին էլ հաղորդակից անելու իր ներքին աշխարհին։

Այդպիսով էլ սկիզբն է առնում բանահիւսութիւնը, մարդկային մտքի և հոգու ամենազնիւ արտադրութիւնը, որ հաղորդւում է ուրիշներին կենդանի խօսքի կամ գրի միջոցով։

Նախնի հայերն էլ ունեցել են քնարերգական բանաստեղծութիւն. նրա մի գլխաւոր տեսակը կոչւել է նուագ,—որևէ երաժշտական գործիքի ընկերակցութեամբ հարսանիքի, խնջոյքի և ուրիշ ուրախութիւնների ժամանակ, մանաւանդ իշխանների և թագաւորների սեղանները զարդարելու համար, ուրախութիւն արտայայտող երգերը։

Հին ազգերի մէջ աստուածների պաշտաման և զոհաբերութեան հետ ընդհանրապէս անբաժան էր երգելով պարելը։ Հայոց պարերի մի քանի տեսակներն են յիշում միայն մեր մատենագիրները. օր. կաքաւք, կայթք, վաղք, պար և պարանցիկք, որոնց համապատասխան երգեր էլ են եղել անշուշտ։ Յիշւում են նոյնպէս տրտմութեան երգեր, ինչպէս՝ գեղոնք, մրմունջք, ողբ, եղերգ, որոնցմով արտայայտւում էին սիրելիների և մերձաւորների մահւամբ առաջացած տխուր զգացմունքները։ Նախնի հայերի սովորութեան համաձայն մահւան դէպքում, մանաւանդ իշխանների յուղարկաւորութեան ժամանակ ի միջի ուրիշ զանազան ծիսակատարութիւնների, մեռեալի գործերը ողբ ու կոծով, յաճախ երաժշտական գործիքի ընկերակցութեամբ երգում էր մէկը,—մայր սգոյ, և նրան ձայնակցում էին սգաւորները,—դստերք սգոյ։ Լալկան կանանց մեռեալին յուղարկաւորելու սովորութիւնը մինչև այժմ էլ Հայաստանում շատ տեղ մնացել է։

Հայերն ունեցել են նաև դուսաններ անունով՝ հաւանօրէն կին երգիչներ, որ երգելով ներկայացրել են դիւցազունների, քաջերի գործերը։ Ցուցք են կոչւել մի տեսակ ժողովրդական ներկայացումներ՝ իրենց սկզբնական դրութեան մէջ, բարեկենդանի և ուրիշ տօների առթիւ մեր այժմեան ժողովրդական ներկայացումներին նման։ Իսկական թատրոնական ներկայացումը՝ դրաման, իբրև արդասիք մի ժողովրդի աւելի բարձր կուլտուրական կեանքի, մեզանում զարգացած չի եղել։ Յոյն պատմագիրները միայն Տիգրան Բ.ի համար յիշում են, թէ նրա պալատում յունարէն լեզուով ներկայացումներ էին տրւում, և թէ նոյնիսկ նրա Արտաւազդ որդին ողբերգութիւններ է գրել, յունարէն։

Ուրիշ երկրների նման Հայաստանումն էլ նախաքրիստոնէական ժամանակներում քրմական դասա-

կարգն է եղել իմաստութեան ներկայացուցիչը. նա ունեցել է իր «մեհենական մատեանները», «մեհենական պատմութիւնները», ուր անշուշտ գրի էին առնուած հոգևոր երգերը, որոնց հետքն այժմ ամբողջովին կորել է։

Աշխարհիկ բանաստեղծութիւնը ոչ պակաս հարուստ է եղել։ Մ. Խորենացին իր «Հայոց պատմութեան» մէջ յիշատակում և պատմութեան հաւաստի լինելուն վկա է կանչում «Թագաւորների մատեաններ», արքունի դիւաններում պահուած գուսանական երգերից «անբաւ զրոյցների ժողովածուներ», «վիպասանքի, թուելեաց երգեր, երգարաններ, առասպելներ, զրոյցներ» և այլն։ Մեր ազգի հնագոյն պատմութիւնը կազմողը դրանցից օգտուել է առաւել կամ նուազ չափով։ Խորենացու Պատմութեան մէջ երբեմն, գրեթէ բառացի, առաջ են բերուած կտորներ, որոնք բացայայտօրէն ժողովրդական բանահիւսութեան դրոշմն են կրում իրենց վրա։ Պարզ է սակայն, որ քրիստոնեա մատենագրի ձեռքի տակովն անցնելով, այդ նիւթերը տարբեր աշխարհայեացքի ազդեցութիւնը կը կրէին շատ տեղ. նրանց չափաբերական ձևն էլ, որ պէտք է ենթադրել թէ ունեցել են, յաճախ կորել է։ Բայց և այնպէս ինչինչ կտորներ համարեա թէ իրենց անխարդախ իսկութեամբ հասել են մեզ իբրև թանգագին ժառանգութիւն, սրբազան աւանդ։

Այդ երգերն ու առասպելները պատում են մեր ազգի ծագումից սկսած մինչև մեր թուականութեան Բ. դարն եղած անձնաւորութիւնների և պատահարների շուրջը. մի մի դիւցազներգութիւններ, առանց մի շարունակական ամբողջութիւն կազմելու։

Պատմութիւնն սկսում է ազգերի ծագումը շաղկապելով դիւցազունների հետ, որոնք աստուածների զարմից էին ու պաշտելի։ Նրանց հետ նաև մեր նահապետների և ազգի ծագումը.

Ահեղ ու երևելի էին առաջին աստուածները. աշխարհին մեծ բարիքների պատճառ եղան, նաև աշխարհի և բազմամարդութեան սկիզբը։ Ու նրանցից ծնան անհեթեթ, յաղթանդամ մարմնով և վիթխարի հսկաներ, որոնք ամբարտաւանութեամբ յղացան աշտարակաշինութեան ամբարիշտ միտքը, և այն իրագործելու ձեռնարկեցին։ Բայց աստուածների բարկութիւնից բարձրացած սաստիկ ու ահագին քամին փչելով՝ փուլ եկաւ աշտարակը. և մարդկանցից ամեն մէկին չլսած լեզուներ տրուեց և նրանք աղմուկ ու շփոթի մէջ ընկան։

Այդ հսկաներից մէկն է յապետոստեան Հայկը, անուանի ու դիւցազուն նահապետ, քաջ նետաձիգ ու աղեղնաւոր...

Այս Հայկը գեղեցիկ ու վայելուչ մարմին ունէր, քաջազանգուր, խայտակն ու հաստաբազուկ. հսկաների մէջ քաջ էր ու երևելի։ Նա ընդդիմացաւ ամենքին, որոնք հսկաներին ու դիւցազուններին իշխել էին կամենում...

«Բաղդն աջողում է Բէլին նաճեել ու տիրել ողջ երկիրը։ Սակայն Հայկը չի կամենում հնազանդել

Բէլին... Նա հեռանում ու բնակւում է մի լեռան ստորոտում, դաշտավայր տեղ»։ Բէլը պատգամաւորի բերանով ասում է Հայկին.

Դու բնակւեցիր սառնամանեաց ցրտութեան մէջ. ջերմացրու, մեղմացրու քո սառած ու հպարտ բարքիդ ցրտութիւնը և հնազանդելով ինձ՝ եկ հանգիստ ապրիր իմ երկրում, ուր որ քեզ հաճելի լինի բնակութեան համար։

Հայկը մերժում է. ու սկսւում է կռիւը։ Հայկին լուր են բերում ու ասում.

Իմացի՛ր, ով դիւցազուններից մեծդ, որ Բէլը յաւերժական քաջերով, երկայնահասակ ու ռազմիկ հսկաներով գալիս է քո վրա։

Աղեղնաւոր Հայկն այդ իմանալով, առաջ անցաւ, հասաւ արքայի մօտ, պինդ քաշեց լայնալիճ աղեղը, նրա կրծքի զրահին կպցրեց երեքթեւեան նետը և սլաքը՝ ծակելով անցնելով Բէլի թիկունքը, ընկաւ գետին։ Ու այսպէս հպարտացած տիտանեան Բէլը կործանւում ընկնում է գետին ու հողին տալիս։

Հայկի յաջորդներից նշանաւոր է հանդիսանում Արամ նահապետը.

Արամը աշխատասէր և հայրենասէր մարդ լինելով, լաւ էր համարում մեռնել հայրենիքի համար, քան տեսնել թէ ի՛նչպէս օտարազգիների որդիները ոտքի տակ էին տալիս հայրենի սահմանները և իր արենակից ազգայիններին իշխում էին այլազգի մարդիկ։

Խորենացի, գիրք Ա. գլուխ Թ. Ժ. ԺԱ. ԺԳ.

Արամ իր հպարտ և պատերազմասէր, հսկաների սերունդից, տիտան, ասպատակ լեռնական թշնամիների վրա յարձակւեց և

յանկարծ, արեգակի ծագելուց առաջ սատակեցրեց նրանց ամբոխի բազմութիւնը։

Եւ ուրիշ շատ քաջութիւններ արաց։ Երկիրը խաղաղացրեց, շէնացրեց ու բարեկարգութիւններ մտցրեց. հպատակներին էլ սորորեցրեց հայերէն խօսել։

Արամի որդի և յաջորդ Արայի օրով Հայաստանն ընկնում է Ասորեստանի իշխանութեան տակ։ Շամիրամ թագուհին «երգերից լսած լինելով» նրա գեղեցկութեան համբաւը, կամենում է նրա սիրտը գրաւել. խոստանում է նրան նւիրել իր անձը, ամբողջ Ասորեստանի փառքն ու գահը։ Սակայն Արան չի շլանում դրանցով, և հայրենիքի անկախութիւնն ու ընտանեական սրբութիւնը պաշտպանելով՝ պատերազմում է և կռւի մէջ մեռնում։

Հայ ժողովրդի զայրոյթը մեղմացնելու և վրէժխնդրութեան ու կռւի տեղիք չը տալու համար, Շամիրամի հրամանով, Արայի դիակը կռւի դաշտում ընկածներից ջոկում և Ցարլէզ աստուածների առաջն են դնում, որ լղելով կենդանացնեն նրան։ Եւ հայը հաւատում է Արայի կենդանանալուն։ Մեր պատմութեան մէջ ուրիշ այդպիսի օրինակներ էլ ունենք, թէ քաջ անձնաւորութիւնը չի մեռնում, թէ աստուածները կարող են նրան կենդանացնել, մանաւանդ նրան՝ որ հայրենիքի համար է ընկել։

Հայկի, Արամի և Արայի պատմութիւնը մեզ չի-

շեշտում է Հայաստանի և Ասորեստանի յարաբերութիւնն այն հին դարերում։ Բայց մեր ուշադրութիւնը գրաւողն աւելի այն հանգամանքն է, որ հայ ժողովուրդը այդ անծնաւորութիւնների, այդ հսկաների միջոցով մարմնացում է տալ իր ղգացմունքին, հաւատքին, իր իդէալներին։ Հայկը՝ Թշնամու ահագին զօրութեան հետ համեմատած իր փոքրաթիւ քաջերով, դիմադրում է բռնաւորին։ Արամը վրդովւում է իր ազգակիցներին օտարի լծի տակ հնչուած տեսնելով և չի հանդուրժում այդ անարգանքին։ Արան իր հայրենեաց համար կռւելն ու մեռնելը գերադասում է գեղեցկուհի Թագուհու գրկանքից, նրա ամբողջ զօրութիւնից և Ասորեստանի արքայական գահից։ Հայ ժողովրդի այս հերոսները միևնոյն ժամանակ շինարար, ժողովրդի բարիքին հոգ տանող խնամատար հայրեր են։

Ինքը՝ Շամիրամ Թագուհին էլ զանազան գրոյցներ հիւսելու նիւթ է դարձել։ Նրա մասին պատմութեան աւանդածն՝ ինչպէս շեշտում է Խորենացին, «մեր աշխարհում եղած առասպելները հաւաստիացնում են։ Ասում են թէ Հայաստանումն է տեղի ունեցել Շամիրամի մահը. թէ նա ոտքով փախել է. թէ շատ ծարաւել և ջուր է ցանկացել ու խմել է. թէ զինուած մարդիկ վրա են հասել և յուռութները ծովը ծգել. որից և այս խօսքերը— ուլունք Շամիրամայ ի ծով... և թէ՝ Շամիրամ Նիոբէից առաջ քար դարձաւ»։ Խոր. Ա. ԺԸ.

Հայ ազգային երգերի և վէպի նիւթ է դառնում

հայկազուն թագաւորներից Երւանդեան Տիգրանը, «որովհետև սա մեր բոլոր թագաւորներից էլ աւելի հզօր ու խոհեմ էր, և ամենից էլ քաջ... բոլոր իր ժամանակակիցներին նախանձելի էր ու յետնորդներիս ցանկալի, ինքն ու իր ժամանակը»։

Քաջերի գլուխն անցնելով ու քաջութիւն անելով, մեր ազգը բարձրացրեց։ Եւ մեզ՝ լծի տակ եղածներիս, շատերի վրա լծադիր և հարկապահանջ դարձրեց։ Շատացրեց մթերքը ոսկու և արծաթի, և թանդագին քարերի և զանազանագոյն կիտւածներով զգեստների՝ թէ տղամարդկանց և թէ կանանց. որով տգեղները գեղեցիկ ու սքանչելի էին երևում, իսկ գեղեցիկներն առհասարակ գիւցազնանում... խաղաղարար ու շինարար Տիգրանը ամենքին իւղով ու մեղրով էր կերակրում։

Այս և այսպիսի շատ բան բերեց մեր աշխարհին այն շէկ ու գանգրահեր Երւանդեան Տիգրանը, կարմիր երեսով, անուշ աչքերով, խոշոր ու թիկնաւէտ, առոյգ ծնկներով ու գեղեցկոտն, կերակուրների և ըմպելիքի մէջ չափաւոր և ուրախութեանց մէջ օրինաւոր։ Սրա մասին ասում էին մեր նախնիները, բամբռի վրա երգելով, թէ մարմնական ցանկութիւնների մէջ ևս չափաւոր էր, և մեծիմաստ, և ճարտարախօս, և ամեն գործի մէջ պիտանի էր մարդկութեան...

Տիգրանին ժամանակակից էր մարաց թագաւոր Աժդահակ և նորա թոռը Կիւրոս, որ յետո Պարս-

կաստանի գահը բարձրացաւ։ Կիւրոսը բարեկամանում է Տիգրանի հետ և այս բարեկամութիւնից շատ մեծ վտանգ է դուշակում Աժդահակը և շարունակ մտատանջութեան մէջ է լինում։ Եւ նա մի երազ է տեսնում ու պատմում իր երևելիներին.

Այսօր, սիրելիներս, իբր թէ ես մի անծանօթ երկրի մէջ էի, դեռնից շատ բարձր մի սարի մօտ, որի գագաթը սաստիկ սառնամանիքով պատած էր երևում. ասում էին որ իբրև թէ հայկազուններին երկրումն էր այդ։ Մինչդեռ ես երկար նայում էի սարին, մի ծիրանազգեստ կին, երկնագոյն քող վրան քաշած, խոշոր աչքերով, բարձրահասակ և կարմիր այտերով կին, երևում էր որ նստել է այն բարձրութեան վրա, երկունքի ցաւով բռնուած։ Եւ երբ երկար ժամանակ հիացած նայում էի այս երևոյթին, այն կինը յանկարծ երեք դիւցազուններ ծնեց, հասակով ու բնութեամբ կատարեալ։ Առաջինն առիւծի վրա նստած՝ սլացաւ դէպի արևմուտք. երկրորդն ինձի վրա նստած՝ շուռ եկաւ դէպի հիւսիս. իսկ երրորդն ահագին վիշապը սանձելով՝ խրոխտաբար յարձակուեց մեր տէրութեան վրա։

Եւ այդպիսի խառն երազների մէջ ինձ թւում էր, թէ իմ արքունեաց տանիքի վրա կանգնած եմ և տեսնում էի որ բնակարաններիս կտուրները զեղեցիկ և գոյնզգոյն շատրւաններով զարդարուած էր. և մեզ պսակող աստուածները կանգնած էին այնտեղ հրաշալի տեսքով. իսկ ես ձեզ հետ միասին զոհերով ու խունկով պատուում էի նրանց։ Եւ յանկարծ վեր նայելով տեսա, որ այն վիշապի վրա հեծնողն, արծուի պէս թռչելով եկաւ, յարձակում գործեց. մօտեցաւ ու կամենում էր աստուածներին կործանի։ Բայց ես, Աժդահակս, արդէլք հանդիսացա ու ինձ վրա ընդունեցի այն յարձակումը, այն սքանչելի դիւցազնի հետ մենամարտեցի։ Նախ նիզակներով իրար մարմինը վիրաւորեցինք, արեան առուներ էին հոսում, և պալատիս արևանման երեսը դարձրինք հոսած արեան ծով։ Այսպէս դեռ շարունակեցինք կուել երկար ժամանակ ուրիշ զէնքերով։

Բայց ի՞նչ օգուտ որ երկարացնեմ պատմութիւնս. որովհետև գործը վերջացաւ իմ պարտութեամբ. ուստի և մեծ վտանգից քրտնաթոր՝ քունը փախաւ աչքերիցս, ու այսուհետև թւում է թէ կենդանի չեմ։ Որովհետև այդ տեսիլքը նշանակում է միայն, թէ հայկազունի Տիգրանը մեզ վրա բուռն յարձակում է գործելու։

Խոր. Ա. ԻԶ.

Այս մարգարէական երազն իր վիպական բարձր ոճովը, սիմբոլական դունաւորումներովը և եղերական վախճանովն իրաւամբ սքանչանք է պատճառում և հայոց հնագոյն բանահիւսութեան ամենագեղեցիկ նմուշներից մէկն է։

Աժդահակը նենգամիտ խորհուրդներով ուզում է երազն իրականանալու առաջն առնել։ Տիգրանի քրոջ՝ Տիգրանուհուն կնութեան է ուզում և բա-

բեկամ ձևանալով՝ Տիգրանին խնճոյքի է հրաւիրում սահմանի վրա, որ յանկարծ յարձակւի ու սպանէ։ Սակայն Տիգրանուհին նախօրօք գաղտնի կերպով զգուշացնում է եղբօրը։ Երկու ազգերի մէջ ծագում է պատերազմ, որի վախճանն երկար ժամանակ անորոշ էր մնում։

Բայց գովում եմ իմ քաջահասակին և նիզակաւորին, որ բոլորովին համաչափ զարգացած անդամներ ունէր, և մարմնի աւարտուն գեղեցկութիւն, որովհետև ամեն բանի մէջ առոյգ էր և ուժի կողմից իրեն զոյգ չունէր։ Եւ ի՞նչ երկարացնեմ խօսքս. երբ կռիւն ըսկսեց, նա իր նիզակը զարնում է երկաթէ ամուր զգեստի մէջ, ինչպէս որ ջուր պատառէր և Աժդահակին շամփրում է նիզակի լայն ծայրին։ Եւ երբ միւսանգամ ձեռքը քաշում է՝ նրա թոքերի կէս մասը նիզակի հետ դուրս է բերում։ Բայց կռիւն սքանչելի էր. որովհետև քաջը քաջին պատահելով՝ շուտով իրարից երեսները չէին դարձնում, ուստի կռիւն երկար ժամանակ տևեց։ Եւ Աժդահակի մահը վերջ տուեց գործին։ Խոր. Ա. ԻԹ.

Տիգրանն Աժդահակի սերունդից շատերին, նրա Անոյշ կնոջ հետ և բազմաթիւ գերիներով տարաւ բնակեցրեց Հայաստան, Մեծ սարի (Մասիսի) մօտերքում։ Նրանից առաջացաւ վիշապազունների զարմը, ոստանիկ կամ արքայական ցեղ։ Այս վիշապները կամ վիշապազունները հայ առասպելաբանութեան և վիպասանական երգերին առատ նիւթ են մատակարարել. մասնաւորապէս Գողթն գինեէտ գաւառի երգիչներին, որոնց երգածից մի քանի տողեր բառացի աւանդել է մեզ Խորենացին։ Այսպէս, Տիգրանի պատմութեանը կից մէջ է բերում Գողթան երգիչների ասածը.

Ճաշ գործեալ Արգաւանայ
Ի պատիւ Արտաշիսի,
Խարդաւանակ լեալ նմին
Ի տաճարին Վիշապաց։

Արգաւանը ի պատիւ Արտաշէսի ճաշկերոյթ տալով, վիշապների պալատում դաւադրում է նրան։

Այս երգի Արտաշէսն, ըստ Խորենացու պատմութեան, ապրում էր մեր թուականութեան Ա. դարի վերջերին. Արգաւանը կամ Արգամը նոյն թագաւորին ժամանակակից է և վիշապազունների իշխանն էր։ Վերոյիշեալ երգը աչքի ընկնող նմանութիւն ունի Տիգրանի ու Աժդահակի յարաբերութեան աւանդութեան հետ։

Արտաշէսի կինն էր պանաց օրիորդ Սաթենիկը, և միևնոյն երգին կից ասում էին Գողթան երգիչները.

Տենչայ Սաթինիկ տիկին տենչանս զարտախուր
Խաւարտ և զտից խաւարծի ի բարձիցն Արգաւանայ։

Այստեղ մի քանի բառերն այժմ անծանօթ լինելով, ամբողջովին հասկանալի չէ։[1] Միայն Խորե-

[1] Խաւարծի են կոչում այժմ Ղարաբաղում մի տեսակ խոտ, որ մարդու բարձի տակն են դնում, նրան սիրահարեցնելու համար։

1002
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄԱՍԱՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

նացին մի ուրիշ տեղ էլ ասում է թէ Սաթենիկը տուփական սէր էր տածում դէպի վիշապազունները, նրանց նահապետ Արգաւանը կամ Արգամը։

Եւ դարձեալ նոյն տեղ շարայարում էին թէ,

Արտաւազդայ ոչ գտեալ
[Քաջի որդւոյն Արտաշիսի,]
Տեղի ապարանից,
[Ի հիմնանալն Արտաշատու]
Նա անց, զնաց և շինեաց
Ի մէջ Մարաց զՄարակերտ.
Ի դաշտին որ անուանեալ կոչի Շարուրայ։

Արտաշատի հիմնանալու, բազմամարդ դառնալու պատճառով Արտաշէսի քաջ որդին Արտաւազդը իրեն ապարանքի շինութեան համար տեղ չը գտաւ ու անցաւ զնաց մարաց մէջ Մարակերտ ապարանքը շինեց, Շարուրա կոչւած դաշտի մէջ։

Արտաւազդի համար ժողովրդական երգերն ու առասպելները ուրիշ շատ բան են ասում, թէ

Վիշապազունները զողացան մանուկ Արտաւազդին և նրա փոխարէն մի դև դրին.

Թէ—ծնելու ժամանակ մի ինչոր պատահարի է հանդիպել—չարոց է կպել.

Եւ թէ—կարծում են որ Սժդահակի ցեղի կանայքը կախարդել են նրան։

Պատմութիւնը յիշատակում է թէ «երբ Արտաշէսի որդի Արտաւազդը չափահաս դարձաւ, քաջ, ինքնահաւան ու հպարտ մէկն եղաւ։ Նախանձելով ծերունի Արգամին, իր հօրը գրգռեց նրա դէմ, իբր թէ նա մտածում է ամենքի վրա թագաւորել։ Այսպէս Արգամին պատւից ձգելով՝ ինքն ստացաւ երկրորդական տեղը». տիրացաւ Արգամի երկրներին, ինչպէս նաև վիշապազունների յատկութեանը։

Երբ իր հօր՝ Արտաշէսի թաղման ժամանակ հին հայկական սովորութեան համաձայն բազմաթիւ կամաւոր մահեր են տեղի ունենում, բողոքում է Արտաւազդը և հօրն ասում է. «դու գնացիր և բոլոր երկիրը քեզ հետ տարար, ես աւերակներին ի՞նչպէս թագաւորեմ»։ Այդ ժամանակ Արտաշէսն անիծում է որդուն.

Եթէ դու յորս հեծցիս
Ցազատ ի վեր ի Մասիս,
Զքեզ կալցեն քաջք,
Տարցեն յԱզատ ի վեր ի Մասիս.
Անդ կացցես
Եւ զլոյս մի տեսցես։

Եթէ դու որսի երթաս Ազատ Մասիսի վրա, քաջքերը թող բռնեն քեզ, թող տանեն Ազատ Մասիսը. այնտեղ կենաս և լոյս չը տեսնես։

Մահամերձ հօր անեծքը բռնում է որդուն և Արտաւազդն իսկապէս կաշկանդւում է քաջքերից և բանտարկւում է Մասիսում, մի այրի մէջ։

Արտաւազդի եղբայր Զարեհն էլ կովկասեան ազգերի ծեռքն է ընկնում և բանտարկւում. սակայն եղբայրներն ազատում են նրան։ Միւս եղբայր Մաժանի համար յիշւում է, թէ նա կռւեց Մուրացան ցեղի՝ նոյն Վիշապազունների, դէմ և թէ վերջն իր եղբայրներից սպանւեց ու թաղւեց Բագաւանում, աստւածների պաշտման տեղում, որով-

հետև նա քրմապետ էր, ասում է Խորենացին: Միւս եղբայր և Արտաւազդի յաջորդ Տիրանի մասին յիշատակւում է միայն, թէ «նա երկու ծի է ունեցել, Պեգասոսից աւելի թեթև և անչափ արագընթաց, որոնք ոչ թէ երկրաղնաց, այլ օդաղնաց էին համարւում»: Արտաշէսի որդիների մէջ դերերը բաժան բաժան են եղել և մէկից միւսին անցել է շատ բան, որը զտել դժուար է:

Ժողովրդական երգի և վէպի հեղինակն անյայտ է մնում. ժողովրդի մտքի ու կեանքի վրա խոր տպաւորութիւն թողնող և կարևոր նշանակութիւն ունեցող պատմական մեծ իրողութիւնները նիւթ են դառնում ժողովրդական երգերի և աւանդութիւնների: Սրանք ժամանակի ընթացքում զանազան արտաքին ազդեցութիւնների տակ միախառնւում, ի մի են ծուլւում, յաճախ ներքին փոփոխութիւնների ենթարկւելով: Այսպիսով ժողովրդական բանաստեղծութեան հեղինակ են դառնում ամբողջ սերունդներ, որ դէպքում բնականաբար նման դէպքերը և նոյնանուն անձնաւորութիւնները զուգորդւում են, խտանում մի շօշափման կէտում ու մի ամբողջութիւն կազմում: Դրանից էլ առաջ է գալիս դէպքերի և անունների անժամանակ և ոչ-տեղին յիշատակութիւնը, անաքրոնիսմ:

Տիգրան Ա.ի նկարագրութիւնն՝ այնքան կենդանի և վառվռուն, որ յիշեցնում է հոմերական հերոսներին, կարծես անմիջապէս բնութիւնից վերցրած լինի. և իրօք:

Բացի ազգային աւանդութիւնից, որ պահպանւել է առասպելի ու երգի մէջ, Քսենոփոն յոյն պատմագիրն էլ յիշում է Տիգրան անունով մի հայ իշխանի, ժամանակակից Կիւրոսին՝ որ մարաց Աստիագէս (Աժդահակ) թագաւորի թոռն էր: Եւ եթէ մի յոյնի յայտնի էր այդ իրողութիւնը, օտարոտի չպիտի թւի, որ միևնոյնը աւելի լաւ ծանօթ լինի ազգային աւանդութեան և նրա արարքները առասպելական գոյն ստանան ժողովրդական երգիչների բերանում ու նա համարւի մի դիւցազն:

Սակայն մեզ ծանօթ երգի պատմական անձնաւորութիւնը համապատասխանում է Տիգրան Բ.ին, Քրիստոսից առաջ Ա. դարում:

Հին հայ Արշակունի իշխանները աշխարհակալութիւններով հետզհետէ ընդարձակում են իրենց երկրի սահմանները: Երկրորդ դարի վերջերին պարթևները հայոց առաջախաղացութեան արգելք են հանդիսանում և Արտաւազդ թագաւորին յաղթելով՝ նրա Տիգրան որդուն էլ գերի են վերցնում: Հայաստանը ընկճւում, ճնշւում է, թէպէտև ոչ բոլորովին նւաճւում: Տիգրանն իր հօր մահից յետո Հայաստանի բազմաթիւ դաւառներ պարթևներին տալով՝ յաջողում է գերութիւնից ազատւել և «քաջերի գլուխն անցնելով ու քաջութիւն անելով», կորցրած երկիրները դարձեալ ձեռք բերել:

Տիգրանը դառնում է առաջաւոր Ասիայի ամենազօրաւոր թագաւորը, շրջակա ազգերը ստիպւած են հպատակւել, հարկ վճարել ու դաշնակից դառնալ այս «արքայից արքային»: Հռոմէական

լեգէոնները դողում են նրա առաջ և որքան յաճախ խորտակւում են Տիգրանի կէս միլիոնի չափ բանակի զօրութիւնից։ Միայն Ատրպատականի Միհրդատ թագաւորը, որ Տիգրանի փեսան էր, մօտ 50000 օգնական զօրք էր տալիս։ Խորենացին յիշում է միայն պոնտացոց թագաւոր հռչակաւոր Միհրդատին իբրև Տիգրանի նիզակակից հռոմայեցոց դէմ, որին և համարում է Տիգրանի փեսա։

Այսպէս բարձրացած հայն ու Հայաստանը իրենց սիրելի թագաւորի մէջ մարմնացրին իրենց ազգային հպարտութիւնը և Տիգրանը բնականաբար դարձաւ ժողովրդական երգիչների փառաբանած հերոսը։

Տիգրանի որդին ու յաջորդ Արտաւազդ Ա. թոյլ մէկը լինելով, կորցնում է հօրը ձեռք բերած փառքն ու ընկնում է հռոմայեցի զօրավար Անտոնիոսի ձեռքը։ Սա գլխատում է Արտաւազդին, գլուխն էլ նւէր է ուղարկում Մեծ Մարաց Արտաբազ թագաւորին, որ թշնամի էր հայոց։

Պարթևների մօտ ապաստանած Արտաշէս արքայորդին պարթևական զօրքով գալիս է Հայաստան և հալածելով բռնակալներին՝ հայրենի գահն է բարձրանում։ Սակայն այդ էլ երկար չի տևում և Հայաստանը դարձեալ օտար իշխողների ձեռքը խաղալիկ է դառնում մինչև մեր թւականութեան Ա. դարը։ այդ ժամանակ պարթևաց Վաղարշ (Վոլոգոզէս Ա.) տիրում է Հայաստանին, իւր Տրդատ եղբօրը հայոց թագաւոր է կարգում. հռոմայեցոց հետն էլ հաշտութիւն կայացնելով՝ Տրդատը Հռոմ է

գնում ու Ներոն կայսրից հանդիսաւորապէս թագաւոր պսակւում 66 թւին Քրիստոսից յետո։

Տրդատ Ա. մեծ քաջութեան գործեր է անում Պարսկաստան ու Հայաստան արշաւող ալանների դէմ, 72 թւին Քրիստոսից յետո։ Այդ կռւում թշնամիները պարան ձգելով՝ Տրդատի կեանքը վտանգի էին ենթարկել. սակայն հայոց թագաւորը պարանը կտրելով ազատւում է։

135 թւին, ալանների երկրորդ արշաւանքին դիմադրողն՝ ըստ հայ պատմագրութեան, Արտաշէս Բ.ն է, որ պարթևաց օգնութեամբ տիրանում է իր հայրենի գահին։ Սա յաղթում է ալաններին, նրանց արքայադուստր Սաթինիկին կնութեան է առնում և հաշտութիւն կայացնում։ Այս Արտաշէսի որդին է Արտաւազդը, որ հօր անէծքի համաձայն, որսի եղած ժամանակ գլորւում է մի խոր վիհի մէջ ու մնում է այնտեղ։

Այսքան մէկ միւսից հեռաւոր ժամանակներում ապրած անձնաւորութիւնների շուրջը պտտած առասպելների ու ժողովրդական երգերի անմիջապէս իրար կից դրուած լինելուցը՝ ոմանք եզրակացրին հայոց վէպի ընդարձակութիւնը։ Սակայն ի նկատի պիտի ունենանք որ պատմագրութիւնը մեզանում Ե. դարից առաջ չէ սկսում. իսկ ժողովրդական երգիչն ու զրուցաբանը ժամանակագրական կարգ պահպանել չը գիտեն։ Նոքա շարայարում են իրենց երգերն ու առասպելները անունների ու պատահարների նմանութեան վրա հիմնւելով. նոյնիսկ շատ անգամ իրենց սիրելի կամ ատելի հերոսին՝ մի սի-

ելի կամ ատելի—արդէն ժողովրդականացած, անուն են տալիս։ Եւ այսպէս մի երգի մէջ երևան են գալիս զանազան նոյնանուն անձնաւորութիւններ և տարբեր հերոսների մասին պատմւում են նման պատահարներ։

Արտաշէսի վէպի և Արտաւազդի երգի մէջ յիշւում է Արտաշատ քաղաքը, որի շինութիւնը Խորենացին վերագրում է Արտաշէս Բ.ին։ Բայց արտաքին աւելի հաւաստի աղբիւրներից յատնի է, որ այդ քաղաքը հիմնարկել է Արտաշէս Ա. Քրիստոսից 180 տարի առաջ. երկրորդ անգամ նորոգել ու շէնացրել է Տրդատ Ա. Հռոմից իրեն հետ բերած ճարտարապետների ձեռքով։

Յիշեցինք նոյնպէս որ ալանների առաջին արշաւանքն եղել է Տրդատ Ա.ի օրով. իսկ երկրորդ արշաւանքի ժամանակ, 135 թւին, Արտաշէս Բ.ն, ըստ Խորենացու, արդէն վախճանւել էր, 127-ին։ Բայց Արտաշէս անունը ժողովրդական ու սիրելի է եղել հայերին. այդ կարելի է եզրակացնել Տակիտոսի աւանդած հետևեալ փաստից, թէ հռոմայեցիների ձեռքով հայոց թագաւոր կարգւած Զենոնը՝ պոնտացոց արքայորդին, Արտաշէս անւանւեց, որովհետև նա սիրելի դարձաւ ժողովրդին։ Այս դէպքում հասկանալի կը լինի ժողովրդական երգչի վարմունքը, այն է՝ Արտաշէս անւան տակ գովել իր սիրած հերոս թագաւորներին, ի մի ծուլելով նրանց կատարած նման գործերը։ Եւ ահա աղդի սիրելի հերոս Արտաշէսի վրա հիւսւած վիպասանքի, ժողովրդական երգի մէջ նրան վերագրւած ուրիշ հերոսների գործեր։ Արտաշէս հալածում է բրոնակալներին Հայաստանից, փառաւոր և անկախ բնիկ թագաւորութիւն հիմնելով։ Արտաշէս հիմնում է գեղեցիկ Արտաշատ քաղաքը, որ այն ժամանակւան հայոց քաղաքական և կուլտուրական կեանքի կեդրոնն էր։ Վերջապէս Արտաշէսը կռւում է Ալանաց դէմ, մեծ քաջութիւններ է անում ու վերջն էլ Սաթենիկին կին առնելով՝ հաշտւում է։

Տիգրան—Արտաշէսի, վիշապաղուններին մայր Անոյշի, Սաթենիկ տիկնոջ դէպի վիշապաղուններն ունեցած սիրային յարաբերութեան և Արտաւազդի մասին առասպելներն ու երգերը մի ներքին կապով միացած են Տիգրանի որդին համարւած Վահագնի անձնաւորութեան հետ, որի ծննդեան նկարագրութիւնն է հետևեալ, պատկառելի հնութեան հետքը կրող և գեղեցիկ հայ ժողովրդական երգերից մէկը.

Երկնէր երկին և երկիր
Երկնէր և ծիրանի ծով.
Երկրն ի ծովուն ունէր
Եւ ըղկարմրիկ եղէգնիկն։
Ընդ եղեգան փողը ծուխ ելանէր,
Ընդ եղեգան փողը բոց ելանէր,
Եւ ի բոցոյն պատանեկիկ վազէր։
Նա հուր հեր ունէր, բոց ունէր մօրուս,
Եւ աչքունքն էին արեգակունք։

Խոր. Ա. Լ.Ա.

Երկունքի մէջ էին երկինքն ու երկիրը. երկունքի մէջ էր և ծիրանի ծովը. երկունքի մէջ էր ծո-

վում նաև կարմրիկ եղէգնիկը։ Եղէգնի փողից ծուխ էր բարձրանում, եղէգնի փողից բոց էր բարձրանում, և բոցի միջից պատանեակ դուրս թռչում։ Հրեղէն մազեր ունէր նա, բոցեղէն մերուք ունէր, և աչքերն էին զոյգ արեգակներ։

Խորենացին իր ականջովը լսել է սորա բամբռի նուագաժուռթեամբ երգելը, և միայն երգի շարունակութեան բովանդակութիւնն է տալիս։ «Ցետո այդ երգի մէջ ասում էին, թէ նա կռուել է վիշապների հետ և յաղթել է, ու Հերակլի քաջագործութիւններին շատ նման գործեր էին երգում նրա մասին։ Այլ և ասում էին թէ Վահագնը աստուածացել է, և թէ վրաց աշխարհում նրա պատկերը կանգնացրած էին ու պատուում էին զոհերով»։

Վահագնի անծնաւորութեան աստուածային ծագում ունենալը վաղուց յայտնի է։ Մի աւանդութիւն կա, որ իբր թէ Վահագնը ասորոց թագաւոր Բարշամից (արևի որդուց) յարդ գողանալով փոխել է։ Ճանապարհին այդ յարդից մի մասը թափւել է երկնքում, որից էլ զոյացել է ցարդող համաստեղութիւնը։ Ոմանք Վահագնին համարեցին ինքն՝ արև-աստուածը. միւսները՝ քաջութեան աստուածը։ Սակայն բանասէրները ակներև դարձրին Վահագն անուան պարսից Վերեթրագնա կամ Վըրտրագհնա—ամպրոպային կայծակի աստծու հետ ունեցած նմանութիւնը։ Այդ անունն իբրև ածական տրված է եղել Ինդրային, և նշանակում է վիշապահան, վիշապաքաղ, այսինքն վիշապ խեղդող, քաղհան անող, և կամ ամպերը հալածող։

Ամպրոպի, փոթորկի և քամու, ամպերի, անձրևելու և կայծակի օդերևոյթը, իր լաւ ու վատ հետևանքներովը, բնութեան դաղտնիքներին անտեղեակ նախամարդու վառ երևակայութիւնը կը գրգռէին անշուշտ և այն մի աստուածային երևոյթ, նրա աննպաստ ու բարերար հետևանքը չար ու բարի ոգիների արդիւնքը պիտի համարուէր, որոնք շարունակ կռուում էին և իհարկէ, յաղթողը միշտ բարին է լինում։

Այս օդերևոյթի բարի ոգու՝ կայծակի անծնաւորումն է մեր Վահագնը։ Նրա ծնունդը կայծակի առաջանալու պատկերն է, երբ կարծես երկինքն ու երկիրը իրար են խառնւում և եղէգնի—սուրբ կրակ արտադրելու փայտի միջից դուրս է թռչում հրեղէն, արեգակնաչեա, արևանման, բոց միրուքով, կրակէ մազերով խարտեաշ պատանեակը, որ ծնւելուն պէս վազում է վիշապի կամ ամպի դէմ կռուելու։

Վիշապը նոյն օդերևոյթի չար ոգու անձնաւորումն է. նա տեսանելի է դառնում ամպերի, փոթորկի, պտուտահողմի, կամ «սատանի քամու», «յուշապի» կերպարանքով, որ երկրի վրա վնասում է մարդկանց, երկնքում ամպերով կապում է երկնային «ժիրանի ծովի» դռները, որ անձրև չգա։ Նա ամպերով ծածկում է երկինքը, որ մարդիկ արևի «լոյս երեսը» չտեսնեն, և նոյիսկ աշխատում է յափշտակել երբեմն մանկամարդ աղջիկ երևակայած արեգակը, որով մարդկանց կեանքին էլ վախճան տրւի։

Բայց բարի ոգին յաղթում է չարին, նրան կապում կաշկանդում է երկաթէ շղթաներով ու բանտարկում է։ Կապուած ոգին կրծում է իր շղթաները, որ ազատի և աշխարհին վերջ տա, ինչպէս որ մեր առասպելի մէջ Արտաւազդը։ «Սրա մասին պառաւներն էլ պատմում են, թէ նա բանտարկուած է մի այրի մէջ, երկաթէ շղթաներով կապուած, և թէ երկու շուն կրծում են նրա շղթաները. նա աշխատում է դուրս գալ ու վերջ տալ աշխարհին. բայց դարբիններին մուրճ խփելու ձայնից զօրանում են, ասում են, նրա կապանքները։ Սրա համար նոյնիսկ մեր (Խորենացու) ժամանակում, դարբիններից շատերը, առասպելին հետևելով, կիրակի օրը երեք կամ չորս անգամ մուրճը խփում են սալին, որ զօրանան, ասում են, Արտաւազդի շղթաները»։ Մինչև այսօր էլ Հայաստանում շատ տեղ պահել են այդ սովորութը. բայց հաւանօրէն սկզբնապէս ոչ թէ մուրճերի ձայնն է, որ ունեցել է շղթաներն ամրացնելու զօրութիւն, այլ պինդ հարուածից առաջացած կայծակը, կայծակ-աստծու նշանակը։

Վահագն՝ ըստ մեր պատմագրութեան, Տիգրան Ա.ի որդին է. իսկ Արտաւազդը՝ Արտաշէս Բ.ի, իրարից մի քանի դար հեռու ժամանակներում ապրած մարդիկ։ Սակայն վերոյիշեալներից հետևում է որ Վահագն ու Արտաւազդը միևնոյն օդերևոյթի չար ու բարի ոգիների անձնաւորումներն են, միասին են ծնուած, եղբայրներ են, ու աստուածային ծագումն ունին։ Վահագնի երգն արդէն ըստինքեան ապացուցանում է, թէ նա յօրինուել է մի այնպիսի

ժամանակ, երբ հայերը դեռ երկինքն ու երկիրը աստուածութիւն ընդունելով՝ արու և էգ սեռերի էին բաժանում նրանց և որդեծնութեան ընդունակ համարում։

Առասպելի մէջ արև-երկնքին փոխարինել է Տիգրան—Արտաշէսը, մայր-երկրին փոխարինել է նախ Անոյշ՝ Աժդահակին կինը, որին գերի է վերցնում Տիգրանը և հաւանօրէն իրեն հարճ դարձնում. ապա՝ Սաթինիկ տիկինը, որ տարփանք է զգում դէպի վիշապազուններրը, որոնք նրա Արտաւազդ որդուն «գողացան և փոխարէնը մի դև դրին»։ Գուցէ նոյնպէս և Արտաշէսի Մանդու անունով հարճը, որին նա խլել էր մուրացանների, նոյն վիշապազունների տէր Արգամից։

Այս խնամութիւններով ու կապակցութիւնեբրովը առասպելի ու երգերի մէջ առաջացած յարաբերութեանց շփոթութիւնը պարզելու և ամփոփ դաղափար տալու համար, աւելորդ չի լինի այստեղ մէջ բերել մի ժողովրդական աւանդութիւն Տէր Յուսկան որդու մասին։

Ինքը՝ տէր Յուսիկը մի սուրբ և ընտիր մարդու որդի կը լինի։ Գործով երկրէ երկիր պտտելու ժամանակ հասնում է մի գիւղ և աղբիւրի մօտ մի շատ գեղանի աղջիկ տեսնելով՝ ասում է. Ք՞այր իմ, մի բաժակ ջուր կուտա՞ս որ օտարականը խմէ ու անցնէ։ Եղբա՛յր իմ, պատասխանում է աղջիկը, համեցէք, խմեցէք որքան կուզէք։

Ամիսներ ու տարիներ անցնելուց յետո այդ աղ-

ջիկն իր ծնողների հետ փախչում է իրենց գիւղն աւերող պարսիկների ձեռքից և պատահմամբ կ'ընկնեն տէր Ցուսկան գիւղը։ Աղջիկն այժմ շատ աւելի գեղեցկացել էր, տասնուհինգ օրւան լուսնակի էր նմանում։ Երիտասարդ Ցուսիկը հաւանում է նրան ու ամուսնանում է հետը։ Առագաստի գիշեր Ցուսիկն ասում է կնոջը.—կը տեսնեմ որ քեզնից քրոջ հոտ կուգա.—ես էլ քեզնից եղբօր հոտ կ'առնեմ, պատասխանում է կինը։ Հարցուփորձով իմանում ու մտաբերում են, թէ իրենք աղբիւրի մօտ քոյր ու եղբայր դարձած ներն են. ուստի կ'ուխտեն, որ միշտ էլ այդպէս մնան, առանց մեղաց պտուղը ճաշակելու. բայց ուրիշների մօտ մարդ ու կին համարւին, որովհետև պսակի սուրբ խորհրդով իրար հետ միացած են։

Տարիներից յետո տէր Ցուսկան գիւղն էլ աւարի ու կրակի ճարակ կը դառնա ու երեցկինն էլ գերի կը տարւի։ Գերեվար պարսիկ խանը հրապուրւում է տիրուհու գեղեցկութեամբ և տանում է իր հարեմը։ Սակայն արդար տէր Ցուսկան աղօթքով խանը հիւանդանում է ու մեռնում։ Խանի ժառանգը վախենում է, թէ մի գուցէ տիրուհուն պահելով ինքն էլ խանի վիճակին արժանանա, տիրուհուն ծախում է Բիբի անունով մի անառակ կնոջ, որը հայ էր կամ մի ուրիշ ազգից քրիստոնեա։ Երեցկինը յայտնում է Բիբիին, թէ ինքը 35 տարի է որ ամուսնացել է, բայց իր մարդու հետ քոյր ու եղբայր են, մեղաց պտուղը չեն ճաշակել։ Խնդրում է որ իրեն անարդ կեանքի չը մատնէ. փոխարէնը

խոստանում է իր ձեռների աշխատանքովը վաստակել. հաւատացնում է թէ իր տէրը, երբ էլ լինի, կը գա իրեն կը փնտռէ ու կը գտնէ, այն ժամանակ Բիբիին էլ կը վարձատրէ։

Մէկ իրիկուն Բիբին տեսնում է որ մի գծուծ ծերունի ծածուկ խօսում է տիրուհու հետ։ Խօսակցութեան միջոցին մէկի բերնէն լոյս կ'ելնէ ու միւսի բերանը կը մտնէ։ Բիբին իսկոյն կ'իմանա, որ ծերուկը տիրուհու սուրբ մարդն է, կ'ընկնի նորա ոտքը և իր բազմաթիւ մեղքերին թողութիւն կը խնդրէ։ Նաև երդւեցնում է քահանային, որ գոնէ մէկ անգամ իրենց առագաստը մտնեն, որպէսզի Աստուած իրենց մի տղա տա, տղան քահանա դառնա և առաջին պատարագն իր մեղաց թողութեան համար մատուցանէ։ Տէր Ցուսիկն ու իր կինը Հայաստան վերադառնալով՝ ունենում են մի զաւակ, Ստեփան անունով։ Մի ժամանակ սով ու սաստիկ թանգութիւն է տիրում։ Պատանի Ստեփանը մի բեռ ցորեն վերցնելով, կը տանի ջրաղաց, որ աղա։ Ճանապարհին աղքատներ են հանդիպում, որոնց ամէն մէկին մի մի բուռը տալով՝ բեռը դատարկւում է։ Ստեփանը պատժւելուց վախենում է ու տուն չի վերադառնում. գնում է անապատները ճգնելու։ Երկար փնտռելուց յետո, ծնողները գտնում են իրենց միւնուճար որդուն, բերում են տուն և վարդապետ ձեռնադրել տալիս. պատւիրում են նոյնպէս որ առաջին պատարագը Բիբիի մեղաց թողութեան համար անէ։

Պատարագի ժամանակ տէր Ցուսկան որդին տես-

նում է սարսափելի արեան ծով, որի մէջ ընկած է լինում Բիբին։ Երկար աղաչանք ու պաղատանքից յետո, Աստծու ողորմութեամբ աջողում է աղատել նրան արեան ծովից և հանել ցամաքը։ Այդ ահաւոր տեսիլը շատ խոր է ազդում տէր Յուսիկն որդու վրա ու նրանից յետո այլևս պատարագ չի անում։ Այդ միակ պատարագը ծառայում է ժողովրդի բերնում ինչպէս մի անսուտ երդում։

Այս աւանդութիւնը, չը նայած քրիստոնէական ուժեղ դունաւորմանը, յիշեցնում է Տիգրանի առասպելը, չնչին տարբերութիւններով։

Այստեղ արդար ու սուրբ քահանա տէր Յուսիկը փոխարինել է արի և քաջ Տիգրանին, Տիգրանուհու փոխարէն՝ տիրուհին, որ կնութեան է տարուում Պարսկաստան,—առասպելի Մարաստանը։ Տէր Յուսիկն աղօթում է, իսկ Տիգրանը պատերազմում է ու յաղթում։ Հայազգի Բիբին Պարսկաստանում, (մարերի, վիշապների հետ) պիղծ յարաբերութեան մէջ է լինում. իսկ Անոյշը Հայաստան է բերւում և նրանից ոստանիկ սերունդ առաջանում։ Տէրտէրն ու տիրուհին քոյր ու եղբայր են, ինչպէս որ Տիգրանն ու Տիգրանուհին։ Ստեփանը սուրբ վարդապետ է ծեռնադրւում և անդրանիկ պատարագի ժամանակ, արեան ծովի մէջից փրկում է Բիբիին և նրան ցամաքը հանում։ Տիգրանի որդի Վահագնը աստուածանում է. ծնելուն պէս վիշապների դէմ կռւելու է գնում և ծիրանի ծովից, երկնային ովկիանոսից անձրև է ցած թափում երկրի վրա։

Խորենացին Արտաշէսի վրա երգուածներից մի քանի հատուած է աւանդել մեզ, և այն յատկապէս հարսանիքի մասին։ Արտաշէսը Ալաններին յաղթելով՝ նրանց արքայորդուն էլ գերի է բռնում. սրա քոյրը՝ Սաթենիկը, դուրս գալով ասում է.

Քեզ եմ ասում, քաջդ Արտաշէս, որ յաղթեցիր Ալանների քաջ ազգին. եկ լսիր ինձ՝ Ալանների աչագեղ աղջկանս, տուր այդ պատանուն, որովհետև դիւցազունների օրէնք չէ մէկ վրէժի համար ուրիշ ազգերի դիւցազունների կեանքը խլել կամ ծառայեցնել նոցա և սորուկների կարգում պահել ու այդպէս յաւիտենական թշնամութիւն պահել երկու քաջ ազգերի մէջ։

Արտաշէսը հաւանում է օրիորդի իմաստութեանն ու դեղեցկութեանը և ուզում է նրան կնութեան առնել։ Սակայն օրիորդի հայրը մեծ գլխագին է պահանջում, ասելով—

Ո՞րտեղից պիտի տա քաջն Արտաշէսը հազարներից հազարներ և բիւրերից բիւրեր Ալանաց այս աղնուատոհմ կոյս օրիորդի փոխարէն։

Արտաշէսը որոշում է փախցնել նրան.

Հեծաւ արի արքայն ի սեաւն դեղեցիկ.
Եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն,
Եւ անցեալ որպէս զարծուի սրաթև ընդ դեան,
Եւ ձգեալ ոսկէօղ շիկափոկ պարանն,
Ընկեց ի մէջք օրիորդին Ալանաց.
Եւ շատ ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին,
Արագ հասուցանելով ի բանակն իւր։

Քաջ Թագաւորը հեծաւ իր գեղեցիկ սև ձին և հանեց ոսկէ օղով կարմիր կաշէ պարանը, ծգեց Ալանների օրիորդի մէջքին և շատ ցաւեցրեց փափուկ օրիորդի մէջքը, շտապով նրան իր բանակը հասցնելով։

Հարսանիքի հանդէսը կատարւում է փառաւոր կերպով, Թագաւորների և մեծամեծների սովորութեան համեմատ.

Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի.
Տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթինկանն։
Ոսկի անձրև էր տեղում Արտաշէսի փեսայութեան ժամանակ. մարգարիտ էր անձրևում Սաթենիկի հարսնութեան ժամանակ։ Խոր. Բ. Ծ.

Բացի դրանցից, Թ. դարի մատենագիր Գրիգոր Մագիստրոսը, «զոհեհիկների» բերանից լսած հետևեալ երգը գրի է առել, հաւանօրէն նրա դեղեցկութիւնից զրաււելով։ Արտաշէսն իր մահուան ժամանակ ասում է.

Ու տայր ինձ զձուխ ծխանի
Եւ զառաւօտն նաւասարդի.
Զվաղելն եղանց
Եւ զվաղելն եղջերուաց.
Մեք փող հարուաք
Եւ թմբկի հարկանէաք,
Որպէս օրէն է Թագաւորաց։

Ով կը տա ինձ ծխանի ծուխը և նաւասարդի առաւօտը. եղնիկների վաղելն ու եղջերուների վաղելը. մենք փող էինք փչում և թմբուկ զարնում, ինչպէս որ Թագաւորների սովորութիւն էր։ Բանասէրների կարծիքով՝ բանաստեղծի այդ խօսքերը յարմարւում են ժողովրդի սիրելի Զենոն-Արտաշէս Գ.ին, որ ազգային սովորութիւններին հաւատարիմ մնաց և տօները մեծ հանդէսներով էր կատարում։

Արտաշէսի հօր՝ Սանատրուկ Թագաւորի մասին «առասպել են պատմում, թէ աստուածներից ուղարկւած մի նորահրաշ սպիտակ կենդանի պահում էր մանուկին», Սանատրուկին, երբ սա իր մօր զիրկն եղած ժամանակ մի անգամ բուքի բռնւեց և երեք օր ու երեք գիշեր բուքի տակ մնաց։

Սանատրուկի գահը յափշտակող ու ապօրինի կերպով Թագաւորող Երուանդի մասին «զրոյցներն այսպէս են. մի վաւաշոտ կին, Արշակունի ազգից, խոշոր մարմնով և անձև երեսով, որին ոչ ոք սիրտ չէր անում կին առնելու, անկարգ խառնակութիւնից երկու մանուկ ծնեց... նոցա անունը դրին Երուանդ և Երուազ... Երուանդի մասին ասում են թէ, հմայուած լինելով՝ վատ աչք ունէր. ուստի երբ լուսանում էր, արքունի սպասաւորները սովորութիւն ունէին պինդ քարեր բռնել Երուանդի առաջ, որի հայացքի չարութիւնից քարերը հեղքւում էին»։

Բանաստեղծի և ոչ պատմագրի խօսքեր են անշուշտ Երուանդի շինած Երուանդակերտ գեղեցիկ դաստակերտի նկարագրութիւնը.

Որովհետև մեծ հովտի միջոցը մարդկանցով
և շինութիւններով լցրեց, որոնք փայլում էին
ինչպէս աչքի բիբը. իսկ մարդկանց բնակութեան շուրջը ծաղկոցներ և բուրաստաններ

շինեց, ինչպէս որ բբի շուրջ աչքի բոլորակն է. իսկ այդինների բաղմութիւնը կարծես կոպերի խիտ և գեղեցիկ գիծն էր և նորա հիւսիսային կողմի կամարաձև դիրքը արդարև գեղեցիկ կոյսերի բարձր յօնքերին էր նմանում։ Իսկ հարաւի կողմից տարածւում են տափարակ դաշտեր, գեղեցիկ ողորկ ծնօտների նման, և բերանի պէս բացւած գետը, իր ափերի բարձրութիւններովը երկու բացւած շրթունքի է նմանում։ Եւ այսպէս գեղեցիկ դիրքը կարծես հայեացքն անշարժ յառած ունի դէպի բարձր Թագաւորանիստ քաղաքը։ Արդարև պտղաբեր և Թագաւորավայել էր այն դաստակերտը։

Երուանդը Սանատրուկի արքայական ընտանիքը սրի քաշելով՝ Թագաւորում է։ Այս սրածութիւնից ազատւում է միայն Արտաշէս արքայորդին, իր դայեակ Սմբատ Բագրատունի ասպետի ձեռքով։ Սրա մասին պատմւած «առասպելն արդարև ամենևին հեռու չէ ճշմարտութիւնից»։

Իր քաջութեան համեմատ էլ մեծ անդամներ ունէր նա և ամեն տեսակ առաքինութիւնների հետամուտ էր. նա զարդարւած էր գեղեցիկ ալևոր մազերով, և աչքերում փոքր արիւնի երակներ ունէր, ինչպէս այդ պատահում է ոսկու վրա և մարգարտի մէջ. արագաշարժ մարմին և անձն ունենալով, զգոյշ էր ամեն բանում և յաջողակ էր պատերազմի մէջ, աւելի՛ քան ուրիշ որևէ մէկը։

Մեր հին ժողովրդական բանահիւսութեան մէկ փշուրն է նաև Վաղարշապատի շինութեան վերաբերեալ հետևեալ կտորը.

Հատուած գնացեալ Վարդգէս մանուկն
Ի Տուհաց գաւառէն, ըզԲասաղ գետով,
Եկեալ նստեալ ըզՇրէշ բլրով,
Զ Արտիմետ քաղաքաւ, ըզԲասաղ գետով,
Կռել կոփել զդուռն Երուանդայ արքային։

Բաժանւելով գնաց Վարդգէս մանուկը Տուհաց գաւառից Բասաղ գետի մօտ, եկաւ նստեց Շրէշ բլրի մօտ, Արտիմետ քաղաքի, Բասաղ գետի մօտ, Երուանդ Թագաւորի դուռը կռել կոփելու։

Հայոց հին Արտիմետ քաղաքի մօտ կամ հէնց նրա աւերակների վրա շինուած է եղել, հռոմայեցիների ձեռքով, մի քաղաք՝ Նոր-քաղաք անունով, որ յետո Վաղարշ Թագաւորը Բ. դարի վերջում նորոգելով՝ Վաղարշապատ է անուանում նրան. ըստ առասպելին՝ հնումը նա Վարդգէսի աւան է կոչւել։ Այս Վարդգէսը Երուանդի քեռայրն է համարւում, որը երևում է նոյնպէս երգիցը. որովհետև «կռել կոփել զդուռն» մինչև այժմ էլ մեր ժողովրդական լեզուով նշանակում է աղջիկ կնութեան ուղել։

Խորենացին յիշատակում է նաև մի «առասպելների առասպել» Տորք Անդեղի մասին, որ մի դիցաբանական անձնաւորութիւն է։ Անդեղի տուն, որ հին Հայաստանի մի գաւառն էր փոքր Ասիայում, յոյն մատենագիրները անուանում են Ինդելինէ։ Հայաստանում այդ անունով մի նախարարութիւն

է եղել, որ ըստ առասպելին, ծաղել է «Հայկակի Թոռ ոմն Պասքամից»։

Խոժոռ դէմքով, բարձր, կոպիտ, տափակաքիթ, խոր աչքերով, դժնեա հայացքով մէկն էր Տորքը. նրա մասին երգում էին, իբր թէ նա ձեռներովը կարծր պինդ քարեր էր բռնում, որտեղ ոչինչ պատառած բան չը կար և ճեղքում է մեծ և փոքր, ինչպէս կամենում էր, և եղունգներով քերում էր, տախտակի նման էր դարձնում, և նոյնպէս եղունգներով արծիւներ և ուրիշ այդպիսի բաներ էր փորագրում։ Պոնտոս ծովի ափին հանդիպել է նա Թշնամիների նաւերին և յարձակւել նոցա վրա և երբ նաւերը ուԹ ասպարէզ ներս են գնացել ծովի մէջ և Տորք չէ հասել նոցա, առել է, ասում են, բլրի ձևով քարեր և ձգել նրանց ետև և ջրերի պատառումից սակաւ նաւեր չեն ընկղմել և բարձրացած ալիքները մնացած նաւերին քշել են շատ մղոններ։ Խոր. Բ. Ղ.

Տորքը այսպիսով երևան է գալիս իբրև պատերազմի աստուած։ «Բարբարոս մարդիկ» Տորքին աստուածացրել ու պաշտել են։

Նախնի հայոց մտաւոր կեանքը, իբրև բնական հետևանք նրանց եռուն, բազմազան և հարուստ կուլտուրական-քաղաքական կեանքին, անկասկած, աւելի բեղուն եղած պիտի լինի, քան Թէ մեր ձեռքը հասած փշրանքներն այդ ցոյց են տալիս։

Երկրի քաղաքականապէս ալեկոծւած և արհաւիրքների ենԹարկւած դրուԹեան պատճառով, դրականուԹիւնն ու գիրը ոչ-քրիստոնեա հայաստանի հետ իրենց բոլոր հաշիւները փակած հոգեւորականի ու մենակեացի բացառիկ սեփականուԹիւնը դարձան և փակւեցին վանքերի ու մենաստանների նեղ խուցերի մէջ։ Բնական էր որ քրիստոնեա քարոզիչ-հոգեւորականը ձգտէր ժողովրդի մտքից արմատախիլ անելու հեԹանոսական դրոշմ կրող ամենաչնչին հետքն անգամ, և որը յաջողւեց նրանց գրեԹէ մեծ մասամբ։ ԵԹէ չը լինէր մի Խորենացի և—չը նայած իրեն՝ Խորենացու մեծ արհամարանքին և նոյն իսկ զզւանքին—հոգեւորական լինելով հանդերձ՝ չը յարգէր իր մեկենասի ջերմ փափագը, այն է՝ ունենալ մի հայոց պատմուԹիւն և նրա մէջ յիշատակւած տեսնել մեր հին վէպերը, առասպելներն ու երգերը, այն ժամանակ այս հատուկտորներն ևս չէին ունենա, որոնք այժմ մեր պարծանքի առարկան են։

Իրենց ձևովը և անձնաւորուԹիւնների նկարագրուԹիւններովը մեր հին երգերը յիշեցնում են հոմերական քերԹւածները. իսկ նրանց բանաստեղծական արտայայտուԹեան եղանակը, վառ գունաւորումները, պատկերացումները շատ նման են Վեդայի երգերին, այն առաւելուԹեամբ որ շնորհիւ հայերէն լեզուի շեշտադրուԹեան օրէնքին, աւելի աշխուժ ու սահուն են։

Երգերի ու առասպելների մէջ յիշւած անցքերը կատարւել են գրեԹէ բացառաբար միջին, հարաւային և հարաւ-արևելեան Հայաստանում—Արարատ-

եան դաշտը, «քաջերի» բնակավայր Աղատն Մասիսով, Վանա լճի հիւսիս-արևելեան, արևելեան և հարաւային ափերը, Վասպուրականի Գողթն գաւառով, որ Հայաստանի Պառնասն է եղել, և որտեղի երգիչների խօսքերը Խորենացին մի քանի դէպքում մէջ է բերում։

Նկատելի է որ հարաւային կողմերի հետ կապուած վէպերն ու առասպելները սեմական ցեղերի ազդեցութիւնն են կրել և կամ գուցէ միևնոյն հիմնական տարրերն են պարունակել իրենց մէջ, միևնոյն աղբիւրից են բղխել, մեր նախահայրերի մի թոյլ յիշողութիւնն իրենց մէջ պահելով։ Մինչդեռ արևելեան կողմերի հետ կապուածներն անկասկած արիական ծագում ունին և մեծ նմանութիւն ունին ուրիշ արիական ազգերի առասպելների հետ։

Սակայն չը նայած Հայաստանի ցեղական տարբերութեանը, մանաւանդ երկրի բնական դիրքի բերմամբ բաժան բաժան եղած ազգաբնակչութեան, և ամենահին ժամանակներից ի վեր մեր երկրի գլխով անցած արհաւիրքներին, ժողովրդի գիտակցութեան մէջ պահպանուել է միութիւն, մի ամբողջութիւն կազմելու գաղափարը և ամեն յարմար առիթով արտացոլում է այն բուռն հայրենասիրական ոգին, որով ներշնչուած է մեր նախնեաց իւրաքանչիւր խօսքը։

Հ. Ս. Խ. Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
U.S.S.R. Публичная Библиотека
7/XI—1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ

Սխալներ։

էջ 3,	մեծարդէք	փոխ.	մեծարժէք
էջ 32,	Յովից	„	Ծովից.

ՀՀ Ազգային գրադարան
NL0371537